

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2021 թվականի
մայիսի 27- ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. 2020-2021 ուստարվա Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայի և բակալավրիատի ավարտական կուրսերի ատեստավորման արդյունքների ամփոփում:
2. Առկա ասպիրանտների ատեստավորում և հայցորդների թեմաների հաստատում:
3. Ֆակուլտետում «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» ստեղծելու մասին հարցը:
4. ԲՈԿ-ի «Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկ»-ում հոգեբանական գիտությունների ԺԹ. 00. 01 թվանիշով «Հոգեբանություն, տեսություն և պատմություն» մասնագիտության անվանման վերանայման հարցը:
5. «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի 1 (8) 2021թ. տպագրության երաշխավորման հարցը:
6. Մրցույթ:
7. Ընթացիկ հարցեր:

1. Լսեցին 2020-2021 ուստարվա մագիստրատուրայի և բակալավրիատի ավարտական կուրսերի ատեստավորման արդյունքների ամփոփման հարցը: Դեկան Ա. Բաղդասարյանը նշեց, որ ղեկավարները բարեխիղճ աշխատանքներ են իրականացրել ուսանողների հետ, որի արդյունքները ապացուցվեցին պաշտպանության ժամանակ: Վերջնական ամփոփումը կներկայացվի հանձնաժողովների նախագահների կարծիքներից և առաջարկություններից հետո:

Նշվեց, որ ֆակուլտետում առկա է 7 մագիստրոսական ծրագիր և մագիստրոսական ծրագրերի ղեկավարներին առաջարկվեց մեծ ուշադրություն դարձնել ապագա կադրերի պատրաստմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

2. Լսեցին առկա ասպիրանտների ատեստավորման և հայցորդների թեմաների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ամբիոնների կատարած աշխատանքը ատեստավորման վերաբերյալ: Ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հ. Ավանիսյանը առաջարկեց նաև նույն ամբիոնի հայցորդի՝ Մ. Մանուկյանի թեմայի հաստատումը, որը քննարկվել է ամբիոնի նիստին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել ամբիոնների կողմից ներկայացված բոլոր ասպիրանտներին և հաստատել հայցորդի թեման:

3. Քննարկվեց ֆակուլտետում «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիա» ստեղծելու մասին հարցը: Ա. Բաղդասարյանը նշեց, որ նման կառույցը կապահովի բակալավրիատի ավարտական կուրսերի և մագիստրոսների պրակտիկայի իրականացումը: Այդ նպատակով ֆակուլտետում հատկացված է լսարան, իսկ զեկուցագիրը ներկայացված է հաստատման:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչներ՝ Ն. Խաչատրյանը, Հ. Ավանեսյանը և խորհրդի անդամները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԲՈԿ-ի « Հայաստանի գիտական աստիճանաշնորհման անվանացանկ»- ում հոգեբանական գիտությունների ԺԹ. 00. 01 թվանիշով «Հոգեբանություն, տեսություն և պատմություն» մասնագիտության անվանման վերանայման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի վարիչներ՝ Ն. Խաչատրյանը և Հ. Ավանեսյանը:

Առաջարկեցին վերանվանել՝ <Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն> անվանումով՝ իր նկարագրիչներով՝ :

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միջնորդել կատարելու փոփոխությունները:

5. Լսեցին «Արդի հոգեբանություն» գիտական հանդեսի 1 (8) 2021թ. տպագրության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ա. Բաղդասարյանը, Հ. Ավանեսյանը, Ս. Զաքարյանը

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել տպագրության:

6. Մրցույթին դիմել էին 13 դոցոնտ և 2 պրոֆեսոր:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց հանձնաժողով՝ Հ.

Ավանեսյանի նախագահությամբ, անդամներ՝ Ն. Ալավերդյան և Ծ. Միքայելյան:

Գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 27-ը, կողմ քվեարկեց 27-ը, դեմ և անվավեր թերթիկներ չկային:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ըստ կանոնակարգի:

7. Ընթացիկ հարցերի քննարկում:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան

